ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐՈՒՄ ԵՎ ՄԱՐՄԻՆՆԵՐՈՒՄ
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԴԻՏՈՐԴՆԵՐԻ ԽՈՒՄԲ

.....

GROUP OF PUBLIC MONITORS IMPLEMENTING SUPERVISION
OVER THE CRIMINAL-EXECUTIVE INSTITUTIONS AND BODIES
OF THE MINISTRY OF JUSTICE OF RA

N 10-04
03.02.2010թ.

ՀՀ Արդարադատության նախարար
պարոն Գ. Դանիելյանին

ՀՐԱՏԱՊ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2010 թվականի հունվարի 25–ին դիտորդական խմբի անդամներ Լաուրա Գասպարյանը, Թեմիկ Խալափյանը, փորձագետներ Ժորժետա Մեսրոպյանը և Էլիզա Եղիազարյանը այցելել են «Վարդաշեն» ՔԿՀ:

Դատապարտյալ Մ[redacted] Հ[redacted]ը տառապում է ուռուցքային հիվանդությամբ / ձախ երիկամի C-r T36 N0 M1 ձախ երիկամային երակի ուռուցքային թրոմբ, մակրոհեմոտուրիա, անեմիա: Վիճակ ձախակողմային նեֆրեկտամիայից հետո մետաստազ ձախ գոտկային մկան, ըստ ՈՒՀՀ և 29.09.09 և 09.11.09 թվականների ԿՏ հետազոտության տվյալների– IV փուլ/: Ըստ ուռուցքաբանության ազգային կենտրոնի օնկոլոգ Ծառուկյանի՝ 14.12.09թ. տրված խորհրդատվության:

ԲԱՀ–ի որոշմամբ 06.10.09թ. դատապարտյալը ներկայացվել է միջգերատեսչական բժշկական հանձնաժողովին՝ ՀՀ կառավարության թիվ. 825–Ն հրամանի՝ պատիժը կրելուն խոչընդոտող ծանր հիվանդությունների ցանկի 6–րդ կետին համապատասխան: Մինչ այժմ չկա միջգերատեսչական բժշկական հանձնաժողովի որոշումը:

Դատապարտյալ Հ[redacted] Վ[redacted]ը տառապում է հետևյալ հիվանդությունով՝ «OD- Բարդացած կատարակտա, տեսաներվի սուբատրոֆիա, ցանցենու հետ բորբոքային դիստրոֆիա, OS- Բարդացած կատարակտա, ապակենման մարմնի դիստրուկցիա, ցացնցենու հետբորբոքային տոտալ շերտազատում: VisOD=0,03, OS=pr.L.incerta /ոչ հատուկ/» համապատասխանում է ՀՀ կառավարության թիվ. 825–Ն հրամանի՝ պատիժը կրելուն խոչընդոտող ծանր հիվանդությունների ցանկի 26–րդ կետին՝ «Տեսողության սրության արտահայտված իջեցում՝ կայուն ախտաբանական փոփոխությունների հիման վրա (երբ լավ տեսնող աչքի տեսողության սրությունը չի գերազանցում 0.05-ը և չի կարող կորեկցիայի ենթարկվել)»:

Հ[redacted] Վ[redacted]ի հետ կապված, դիտորդական խումբն ունեցել է հրատապ հաշվետվություն, որից հետո նա ենթարկվել է ևս մի քանի հետազոտությունների: Ախտորոշումը հաստատվել է, և հիվանդ դատապարտյալը ներկայացվել է միջգերատեսչական բժշկական հանձնաժողովին, սակայն մինչ այժմ չկա համապատասխան որոշում:

ՀՀ Երևան 0025, Այգեստան 11փ, տուն 43 Aygestan 11th str. 43 build, Yerevan 0025, RA
Tel / fax: + (37410) 55 96 34, e-mail: pmg.armenia@hra.am

Խնդրում եմ Ձեր միջամտությունը՝ նշված դատապարտյալների հարցով միջգերատեսչական հանձնաժողովի կողմից համապատասխան որոշումներ կայացնելու հարցում:

ՀՀ ԱՆ ՔԿՀ-ներում և մարմիններում հասարակական
վերահսկողություն իրականացնող հասարակական
դիտորդների խմբի նախագահ՝ Ա.Դանիելյան

ՀՀ Երևան 0025, Այգեստան 11փ, տուն 43 Aygestan 11th str. 43 build, Yerevan 0025, RA
Tel / fax: + (37410) 55 96 34, e-mail: pmg.armenia@hra.am